Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

10(727)
2026
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

ԼՈՒՍԱՐԱՐ

Lusarar ● ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ ● Lusarar

«Շեքսպիրը դարձել է մի չափ ազգերի զարգացման աստիճանը որոշելու համար: Եթե մի ժողովուրդ նրան չի թարգմանում, կնշանակի՝ տգետ է, եթե չի հասկանում, կնշանակի՝ տհաս է, եթե մի լեզու նրա վրա չի գալիս, կնշանակի՝ տկար է:

…Շեքսպի՞րը,- նա տարերքն է, համայնապարակ տիեզերքը: Շեքսպիրը ամեն ինչ է»:

Հովհ. Թումանյան

ՇԵՔՍՊԻՐ ԵՎ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Տարազգի-տարալեզու գրականության մեծ աշխարհ մենք մտնում ենք Թումանյանով, և այդ աշխարհը այլևս մեր հայրենի եզերքն է:

Առանց Թումանյանի՝ այդ եզերքը մերը չէ, այլև մենք այդ աշխարհի առջև կանգնած ենք աղքատ ազգականի մեր խեղճ ու ցածր թշնամանքով…

Թումանյանով՝ մենք կանք: Առանց Թումանյանի՝ մենք չկանք:

Հրանտ Մաթևոսյան

«Դաճախ հարց է ծագում՝ եթե մեր աշխարհայացքի, արժեհամակարգի վրա ազդում են մեծերը իրենց գործերով, գաղափարներով, իսկ ովքե՞ր են ազդում այդ մեծերի աշխարհայացքի ու արժեհամակարգի վրա:

Թումանյանի առումով կարելի է ասել, որ



այդ ազդեցությունները բազմազան են. օրինակ՝ հայրը, որ առակասաց էր, քահանա, նաև երգել գիտեր, միաժամանակ բանահյուսական աղբյուր էր. մայրը, որից Թումանյանը վերցրեց Լոռվա սարերի, ձորերի ավանդույթները, որ սնուցման աղբյուր դարձան «Մարո»-ի, «Անուշ»-ի, «Լոռեցի Սաքո»-ի համար:

Հետո՝ Ջալալօղլի (Ստեփանավան). Տիգրան Տեր-Դավթյանը մեծապես ազդեց ապագա գրողի աշխարհայացքի վրա: Հետո՝ Ներսիսյան դպրոց, որը շատ նպաստավոր միջավայր էր նրա համար: Վերջապես, հայ գրականություն, որի նշանավոր մեծերը՝ Ղևոնդ Ալիշան, Խաչատուր Աբովյան, խոր հետք թողեցին նրա վրա, ռուս գրականությունից՝ Միխայիլ Լերմոնտով, Ալեքսանդր Պուշկին, եվրոպական գրականությունից՝ Գյոթե, Հայնե, Բայրոն, Շեքսպիր, որն առանձնահատուկ տեղ է ունեցել Թումանյանի կյանքում». այս ներածականով թանգարանի տնօրեն Լուսինե Ղարախանյանը ներկայացրեց Թումանյանի ստեղծագործական կյանքի վրա ազդեցությունների շրջանակը:

Ավելի մանրամասն այս ազդեցության մասին Թումանյանի թանգարան հրավիրված բանախոս, բ.գ.դ., թումանյանագետ, Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի առաջատար գիտաշխատող Սուսաննա Հովհաննիսյանից բացի՝ թերևս լավագույնս չէր ներկայացվել: Իրոք, Շեքսպիրը կայուն ու շատ կարևոր դեր է կատարել Մեծ Լոռեցու վեհ գաղափարների ձևավորման գործում:

Սուսաննա Հովհաննիսյանը, ողջունելով ներկաներին, նշեց, որ գրական ասուլիսի թեման ունի մշակութաբանական և գեղարվեստական խորքային նշանակություն:

Շեքսպիր և Թումանյան… Չնայած երեք դար է բաժանում նրանց իրարից, բայց միավորում են աշխարհընկալման, գեղարվեստական մտածողության, իրենց ազգերի մշակույթի պատմության մեջ ունեցած բացառիկ դերի ընդհանրություններ:

Անհնար է պատկերացնել անգլիական գրականությունն առանց Շեքսպիրի, հունականը՝ առանց Հոմերոսի, գերմանականը՝ առանց Գյոթեի, հայկականը՝ առանց Թումանյանի:

Ամենայն հայոց բանաստեղծը հայ մշակույթի մեջ ստեղծեց մի ամբողջ աշխարհ, և այդ աշխարհի ներսում նրա մշտական ուղեկիցը եղել է Վիլյամ Շեքսպիրը: Շատերն են մեզ բախտավոր ազգ համարում, որ ունենք խորհրդանիշ գրող: Խոսքը տաղանդի, հանճարի մեծության մասին չէ. հարցն այն է, որ ինչ-որ մի գրող դառնում է իր ազգի ոգու, բնավորության արտահայտիչը՝ շարունակելով ազգայինի վրա մնալ համամարդկային:


Շեքսպիրը Թումանյանի համար եղել է ոչ թե պարզապես սիրելի հեղինակ, այլ գեղարվեստական մտածողության չափանիշ, ինքնակրթության առանցք, մարդու ճանաչողության դպրոց ու նաև հոգևոր սնունդ: Շեքսպիրի նկատմամբ Թումանյանի վերաբերմունքն արտահայտվել է ոչ միայն ավարտուն աշխատություններում («Համլետ»-ի հայերեն Մասեհյանի և Բաբազյանի թարգմանությունների գրախոսականներ), թարգմանությունների մասին տեսական հոդվածներում, այլև սևագիր գրառումներում, բանավոր զրույցներում և այլուր: Շեքսպիրի մասին թումանյանական գնահատականներից շատերը ասույթի արժեք են ձեռք բերել, տպագրվել առանձին գրքով՝ սեղանի գիրք դառնալով յուրաքանչյուր հայ շեքսպիրագետի համար:

Բանախոս Սուսաննա Հովհաննիսյանը Թումանյանի շեքսպիրասիրությունը պայմանականորեն բաժանում է տարբեր շրջափուլերի.

1. *Կախարդանքի շրջան (1886-1890-ականների սկիզբ, Ներսիսյան դպրոց).*

Դպրոցի տարբեր դասարաններում սովորող ընկերների հետ բանաստեղծը գրասերների մի խումբ էր ստեղծել (ընդամենը 15 տարեկան էր) և առաջին անգամ ծանոթացել Շեքսպիրին բնագրով: Ընկերներից Վրեն Տաշրացին պատմում է. «Մեր մեջ ամենափոքրը Թումանյանն էր… Մեր ընթերցասեր ընկերներից մեկն էլ Պոլսեցի էր՝ Հյուսյան Մեսրոպ, մի որբ տղա: Մեսրոպն ազատ կարդում էր անգլերենով Շեքսպիրը, որով տարվեցինք ամենքս էլ, բայց ամենից շատ՝ Թումանյանը»:

1880-ական թվականներին Թիֆլիսում բեմադրվում էին Շեքսպիրի «Համլետ»-ը, «Լիր արքա»-ն, «Օթելլո»-ն, «Մակբեթ»-ը. գլխավոր դերերում Պետրոս Ադամյանն էր: Բանաստեղծը հիշում է, որ 19-րդ դարի 80-ական թվականներին Ներսիսյան դպրոցի աշակերտներին արգելված էր թատրոն գնալ, քանի որ որոշ շրջանակների համար այն «անբարոյականության վայր» էր: Այդ ժամանակ Լոռուց Թիֆլիս մեկնեց Թումանյանի հին ուսուցիչ Տիգրան Տեր-Դավթյանը, որը հավաքեց իր նախկին աշակերտներից մի քանիսին ու տարավ «Համլետ» ներկայացմանը՝ տեսնելու Ադամյանին Համլետի դերում: «Էդ գիշեր,- գրում է Թումանյանը,- ես էնքան սիրեցի «Համլետ»-ը և հետո էլ Շեքսպիրին, որ մի քանի դրամա գրեցի ու միշտ ոչնչացրի, որովհետև… Շեքսպիրի գրածների նման չէին դուրս եկել: Սակայն էնքան ուժեղ էր կախարդանքը, որ մինչև օրս էլ (1916թ., հունիսի 3) ես ինձ դրամատուրգ եմ համարում, քան ուրիշ մի բան»:



Բանախոս՝ բ.գ.դ., թումանյանագետ, Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի առաջատար գիտաշխատող Սուսաննա Հովհաննիսյան

Կյանքի առաջին շրջանում Թումանյանի անձնական գրադարանը հարստանում է շեքսպիրյան հրատարակություններով: Թումանյանի շեքսպիրասիրությունը նաև համլետասիրությունը որոշ չափով առնչվում է Համլետի կերպարը բեմում վերստեղծած անվանի դերասան Պետրոս Ադամյանի, շեքսպիրյան դերերում փայլուն դերակատարի խաղից ստացած պատանի բանաստեղծի տպավորություններին: Ադամյանի խաղը նման էր «կայծակի րոպեական շլացնող փայլի», որն ամբողջ կյանքում դարձավ Թումանյանի շեքսպիրասիրության կարևոր գործոններից մեկը:





2. *Երկրորդ շրջան (1890-ականներ). Շեքսպիրը՝ որպես ինքնակրթության հենք, իմացության հենարան և շարժիչ ուժ*

Թումանյանը Թիֆլիսում բաց չի թողել շեքսպիրյան որևէ բեմադրություն: Համլետի դերում հայ բեմի վրա նա տեսել և հնարավորություն է ունեցել համեմատելու վեց հայ (Պետրոս Ադամյան, Կարապետ Գալֆայան, Նիկողայոս Հովհաննիսյան, Սիրանույշ, Ամո Խարազյան, Հովհաննես Ջարիֆյան) և երկու օտարազգի (Էռնեստո Ռոսսի, Մամոնտ Դայլսկի) դերասանների: Երբ մայիսի 30-ին Ռոսսիի խաղը հանդիսատեսը ունկնդրեց մեծ հափշտակությամբ, և թատրոնը «դղրդաց միահամուռ ու անընդհատ ծափահարություններից», բայց Թումանյանի կարծիքը համընկավ հանրային կարծիքին. «Սքանչելի է… բայց Ադամյանին չի հասնի»: Ադամյանի ստեղծած Համլետի կերպարը անփոխարինելի մնաց պոետի համար:

1890-ականներին բանաստեղծը ոչ միայն ընթերցում, այլև խորապես ուսումնասիրում էր համաշխարհային դասականներին, մասնավորապես՝ Շեքսպիրին: Այս շրջանը Շեքսպիրի արվեստի գաղտնիքների հայտնաբերման և նրա հանճարը սթափ գնահատելու շրջանն էր:

Ներսիսյան դպրոցը չավարտած Թումանյանը դարձավ ժամանակի ամենազարգացած ու լայնախոհ մտածողներից՝ ինքնակրթության միջոցով, որի հիմքում, իր իսկ խոստովանությամբ, ընկած էր առաջին հերթին Շեքսպիրը: Հենց այս շրջանում նա սկսում է հավաքել Շեքսպիրի երկերի հայերեն, ռուսերեն և օտար լեզուներով հրատարակությունները, նրան նվիրված գրականություն, մենագրություններ, հոդվածներ և այլն: Հայերեն հրատարակությունները համեմատելով ռուսական մի շարք թարգմանությունների հետ, առանձին արտահայտություններ, բառեր ստուգելով բառարաններով՝ արել է բազմաթիվ դիտողություններ:

3. *Վերնատան շրջան. Թումանյան-Շեքսպիր (1900-1908).*

20-րդ դարասկզբին Թումանյանի բնակարանում ձևավորվում է «Վերնատունը»՝ հայ գրականության ամենաշահնակալի գրական սալոնը, որը զբաղվում էր դասականների ուսումնասիրությամբ. «Կլասիկները մեր առօրյա, գործնական զբաղմունքն էին: Մենք ձգտում էինք գնալ նրանց ուղիով… /ԹԺՀ, 2019/: «Վերնատան» յուրաքանչյուր անդամ, ըստ իր նախասիրությունների, համաշխարհային գրականությունից ու փիլիսոփայությունից մի անուն էր վերցրել, որոնք երբեմն փոխում էին: Ավ. Իսահակյանն ունեցել է ոչ միայն Նիցշե, այլև Հայնե և Գյոթե անունները: Լևոն Շանթին Հայնեից բացի անվանել են նաև Իբսեն, Դ.Դեմիրճյանին՝ Բայրոնից բացի՝ նաև Գյոթե և Շիլլեր:

☞2

ԱԶԳԱՅԻՆ ՈԳԻ

«ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԸ». ՆՈՐՈՎԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԴԵՐԱՍԱՆ ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԵՏ


Հովհաննես Թումանյանի թանգարանի աշխատակիցների (տնօրեն՝ Լուսինե Ղարախանյան)՝ 2024 թվականից սկսած նախաձեռնությունների շարքը օրեցօր ընդլայնվում ու նոր թափ է հավաքում՝ մեծանուն գրողի ազգային ու համամարդկային արժեքները հանդիսատեսին հասցնելու համար:

Հերթական միջոցառումը, տնօրենի հավաստմամբ, նվիրված էր մեր էպոսի «Սասունցի Դավիթ» ճյուղի թումանյանական մշակմանն առնչվող դերասանական վարպետությանը, որի կրողն է անվանի դերասան Վարդան Պետրոսյանը: Այդ օրվա ուշագրավ հանդիպումը, որը նախաձեռնել էր թանգարանի տնօրենությունը, հետապնդում էր մի կարևոր նպատակ՝ մեծերի համար՝ մեծերի հետ (Լուսինե Ղարախանյանի խոսքերն են): Հրանտ Մաթևոսյանի մշակութային կենտրոնում իրենց ժամանակավոր ներկայությունը երբեք չի խոչընդոտել հետաքրքիր նախաձեռնություններ կազմակերպելուն: Թանգարանի նախաձեռնած «Ոսկեդարան»-ը լինելու է ոչ միայն աուդիո, այլ նաև վիդեո տարբերակով (վիդեոդարան):

Հանճարեղ դերասանի վարպետությունը փայլել է ոչ միայն Թումանյանի հեքիաթների տարալեզու թարգմանությունների մեջ, այլև «Սասունցի Դավիթը» պոեմի ասմունքում:

Լուսինե Ղարախանյանն իր ներածական խոսքում անդրադարձավ պոեմի ստեղծման պատմությանը: Պոեմն ամբողջությամբ կար 1902 թվականին, 1903-ին հատվածաբար լույս տեսավ «Մշակ» պարբերականում, իսկ 1904-ին Ստեփան Լիսիցյանի «Հայ բանաստեղծներ» մատենաշարում ամբողջական տպագրվեց պոեմը, որը լիովին ներկայացնում է մեր ազգի հոգեկերտվածքը: Թումանյանի «Սասունցի Դավիթը» մեր ժողովրդական էպոսի բանաստեղծական լավագույն մշակումն է, որը, սակայն, մեծ գրողին չէր բավարարում: Ինչպես «Անուշ» պոեմն էր երկրորդ անգամ մշակել, այնպես էլ «Սասունցի Դավիթը» որոշեց կրկին փոփոխել: 1912 թվականին՝ բանտից ազատվելուց հետո, ձեռնամուխ եղավ այդ գործին, որի մասին իր հուշերում փաստում էր Ավետիք Իսահակյանը: Մեծ գրողն ուզում էր ամբողջությամբ մշակել մեր ժողովրդական «Սասնա ծռեր» էպոսը, քանի որ վստահ էր իր ուժերին, բայց չհասցրեց:

Միջոցառմանը հրավիրված հեքիաթասաց, էպոսագետ, կինոռեժիսոր Հայկ Կիրակոսյանը, շնորհակալություն հայտնելով և՛ Լուսինե Ղարախանյանին՝ գեղեցիկ նախաձեռնությունների համար, և՛ Վարդան Պետրոսյանին՝ Թումանյանին և մեր էպոսը կերտելու համար, անդրադարձավ դյուցազներգության նախերգանքին.



Դառնա՜մ զողորմին տի տամ,
Զողորմին տամ Ծովինար խանումին,
հազար ողորմի:
Դառնա՜մ զողորմին տի տամ,
Զողորմին տամ Մեծ Միերին,
հազար ողորմի:
Դառնա՜մ զողորմին տի տամ,
Զողորմին տամ Ջենով Օհանին,
հազար ողորմի:
Դառնա՜մ զողորմին տի տամ,
Զողորմին տամ մեր էն Դավթին,
Էն Թուր-Կայծակին, Քուռկիկ Ջալալուն,
հազար ողորմի:
Դառնա՜մ զողորմին տի տամ,
Զողորմին տամ Փոքր Միերին,
հազար ողորմի:
Ողորմի՜ էս էպոսը ասողին,
Ողորմի՜ էս էպոսը լսողին,
Ողորմի՜ Սասնա բոլոր քաջերին:

Հետո մի հետաքրքիր դեպք պատմեց. «Երևանի փողոցներով մեքենաս վարելիս որոշեցի ռաբիզ երաժշտության փոխարեն միացնել համացանցում առկա էպոսի թումանյանական մշակումը, մանավանդ որ խցանումները շատ մեծ էին, ու ես էլ շատ ժամանակ ունեի: Միացրի մեքենայիս ձայնային հնարավորությունների մաքսիմալ չափով ու սկսեցի վարել մեքենաս: Մարդիկ լսում էին, ու կողքից արձագանքող հայացքներից հասկացա, որ մարդկանց դուր է գալիս այդ նյութը, կարոտ են ազգային խոսքին… Անհամբեր սպասում եմ՝ ունենամ պոեմի՝ Վարդան Պետրոսյանի ընթերցմամբ տարբերակը: Ես տեսա ձեռքով ողջույնի ժեստեր, հուզվող մարդկանց ու հասկացա, որ դյուցազներգությունը մեզ համար միշտ եղել է խորը քնից արթնացման կարևորագույն միջոց: Բավական է՝ ռաբիզով մեզ «բռնության» ենթարկեն: Պետք է ունենայինք մի խենթ նախաձեռնություն, մի խենթ մարդ, որ գնար այդ համարձակ քայլին, և մենք իրականացնեինք «Ոսկեդարան»-ը, հետո՝ Դավթի պատգամը՝ «Ով քնած է՝ արթուն կացեք, Ով արթուն եք՝ ելեք, կեցեք, Ով կեցել եք՝ զենք կապեցեք, Ով կապել է՝ ելեք, հեծեք…», որն ուղղված է քնած կամ անտարբեր մնացածներին՝ զարթնելու, պատրաստվելու և հայրենիքը պաշտպանելու: Այս պատգամը խորհրդանշում է ազգային արթնությունը, միասնությունը և պատրաստակամությունը՝ պաշտպանելու սեփական երկիրն ու արժանապատվությունը վտանգի պահին: Նիրհի վիճակը մեզնից յուրաքանչյուրի համար կարող է դառնալ համար մեկ թշնամին: Ջանփոլադյանը գրում է, որ էպոսը Թումանյանի համար եղել է ինչպես Կանքնաղբյուրի ջուրը մեր դյուցազունների համար, որով զորանում էին նրանք: Էպոսը շատերն են գեղարվեստական մշակման ենթարկել (Ե. Չարենց, Ավ. Իսահակյան, Ն.Զարյան, Մ.Խերանյանը…), սակայն Թումանյանի մշակումը մնում է որպես լավագույն ու բացառիկ մի գործ: Մեծանուն գրողը լավ գիտեր ամեն բառի ու խոսքի իմաստը: Թումանյանն իրոք անմահ է, և չպետք է մոռանալ այդ մեծության արժեքը, այլև անընդհատ կենդանի պահել նրա ստեղծագործության մեջ կոդավորված ամեն մի գաղափար: «Սասունցի Դավիթը» Թումանյանի գլուխգործոցն է»,- իր խոսքն այսպես ավարտեց Հայկ Կիրակոսյանը՝ շնորհակալություն հայտնելով թանգարանի տնօրեն Լուսինե Ղարախանյանին՝ այդ «խենթ» քայլի համար:

Հետո բեմը տրամադրվեց դերասան Վարդան Պետրոսյանին, որը ներկայացրեց թանգարանի կողմից իրեն արված առաջարկը՝ կարդալ «Սասունցի Դավիթը» պոեմը, իր մտավախությունները և այլն: Պատմեց, որ դեռևս 7-8 տարեկան էր, երբ մայրն իր համար կարդաց այդ պոեմը, ու իրեն թվացել է, թե դա ընդամենը մի «կռիվ կինո» է, ու վերջ: Հետագայում՝ ուսանողական տարիներին, կրկին առնչվել է էպոսին ու հասկացել, որ դա մեր ազգային մեծ արժեքն է, որում կոդավորված են մեր ժողովրդի բոլոր հատկանիշներն ու դարերի կենսափորձը: Պատանեկան տարիներին նույնիսկ ջղայնացել է այն բանի համար, թե ինչու է Դավիթը տեղի տալիս արաբ ծերուկի խնդրանքի առջև: Մսրա Մելիքը երբ հավաքում-բերում էր պատերազմի, ինչո՞ւ չէին հրաժարվում կռվելուց, իսկ հիմա, երբ տեսնում է Դավթի բազկի ուժը, աղաչում է՝ չկոտորել «անմեղ մարդկանց»: Գիտակից հասակում կարդում էր ու միշտ նորանոր բացահայտումներ անում. սա էր ամենակարևորը: Իսկ երբ թանգարանի կողմից առաջարկը ստացավ, մտածում էր՝ արդյո՞ք այդքան համարձակություն կունենար՝ ներկայացնելու Թումանյանի այդ արժեքավոր գործը: Դրանից առաջ նա արդեն ներկայացրել էր գրողի հեքիաթների մի մասը օտար լեզուներով ու իր արժանի տեղը զբաղեցրել հայտնի «Ոսկեդարան»-ում: Այդ գործը, սակայն, լուրջ աշխատանք էր պահանջում իրենից, ու նա գիշեր-ցերեկ տքնում էր: Թե ինչ ապրումներ է ունեցել այդ ընթացքում, նկարագրել հնարավոր չէ: «Քանի՜-քանի՜ տեղ կա այս պոեմում, որ ես երեխայի պես հեկեկում եմ,-պատմում-անկեղծանում է մինչև վերջ Վարդան Պետրոսյանը: - Չեմ հասկանում՝ տարի՞քս եմ առել,

---

ՇԵՔՍՊԻՐ ԵՎ ԹՈՒՄԱՆՅԱՆ

1 ☜ Միայն Թումանյանի Շեքսպիր անունը միշտ մնաց անփոփոխ, միայն նա հավատարիմ մնաց իր Շեքսպիր անվանը: Նա «Վերնատան» Շեքսպիրն էր՝ իբրև անգլիացի հանճարի ամենամեծ երկրպագու: Գուցե հենց սրանով է բացատրվում, որ Թումանյանը, օժտված լինելով թարգմանչի մեծ տաղանդով, ռուս և օտարազգի հեղինակների բանաստեղծական թարգմանությունների փայլուն նմուշներ տալով հայ գրականությանը, երբեք ոչինչ չթարգմանեց Շեքսպիրից: Թումանյանի համար Շեքսպիրը ամենօրյա հոգևոր հաց էր:

4. *Շեքսպիրի թումանյանական ընկալումը.*

Բանախոսն անդրադարձավ այն փաստին, որ աշխարհի մեծերի համեմատության մեջ Թումանյանի համար Շեքսպիրը մնաց միշտ բացառիկ ու անմրցակից: Գնահատելով մյուս հանճարներին՝ բանաստեղծը գրումը է. «Ամենից մեծը Շեքսպիրն է. բնության բոլոր երևույթները կան նրա մեջ՝ և՛ կայծակ, և՛ հեղեղ, և՛ արև, և՛ ծով, և՛ ամեն ինչ, բայց իշխողը արևն է… Նա ինքը բնություն է՝ խոշո՛ր, մե՛ծ, անմա՛հ ու համայնապարփա՛կ. ամեն ինչ ընդգրկող, տվող, հասկացող, և բոլորը գտնում են նրա մեջ, ինչ որ ուզում են. նրա գրվածքներում ամեն ինչ կա, և ամենն էլ իր տեղն է»: Շեքսպիրը բանաստեղծի համար անբացատրելի ու անհասանելի հանճար էր. «Շեքսպիր կարդալ, Շեքսպիր հասկանալ՝ կնշանակի մեծանալ, հասկանալու համար պետք է ունենալ մեծ երևակայություն, գրական ուժեղ հոտառություն և ըմբռնում: Շեքսպիր կարդալը հաճույք է… նա տարերք է, համայնապարփակ տիեզերքը…»: Թումանյանը այն եզակի մտածողներից է, որ բանաստեղծին համեմատում է Աստծու հետ. երկուսն էլ ստեղծում են ոչինչ բաներից մեծ բաներ…

5. *Շեքսպիրը՝ որպես մի շարք գիտական թումանյանական տեսությունների ձևավորման հիմք.*

ա/ Թումանյանը, որ աստվածացրել է Շեքսպիրին, հաշվի չի առել, թե նա ինչ միտք է հայտնել, այլ թե ինչպես է հայտնել: Սա գեղարվեստի նյութի ու ձևի՝ «ինչ»-ի և «ինչպես»-ի մասին մի ամբողջ տեսություն է:

բ/ Թումանյանը Շեքսպիրի միջոցով ձևավորում է նաև հանճարի մասին իր տեսությունը. «Բանաստեղծը նոր տիպ է տիեզերքի մեջ. եթե մարդկության հետ գործ ունի՝ հանճար է, օրինակ՝ Շեքսպիրը, եթե ազգի հետ գործ ունի՝ տաղանդ է»:

գ/ Շեքսպիրի օրինակով է Թումանյանը հստակ ձևակերպում համամարդկային և ազգային արվեստի առնչակցությունը: Շեքսպիրը նրա համար համամարդկայինի մարմնավորումն է: Գրողի ազգային լինելը, նրա կարծիքով, չի որոշվում լեզվով, սյուժեով կամ հերոսներով: Ազգայինը ձև է, համամարդկայինը՝ բովանդակություն: Շեքսպիրը նրա համար օրինակ է այն բանի, թե ինչպես է հնարավոր ազգային հողի վրա ստեղծել համամարդկային արժեք:

6. *Շեքսպիրը բանավոր զրույցներում.*

Թումանյանը շատ հաճախ էր բանավոր խոսքում, մասնավոր զրույցներում հիշատակում շեքսպիրյան հերոսներին ու նրանց արտահայտությունները: Այսինքն՝ Շեքսպիրը բանաստեղծի մտավոր զրուցակիցն էր, որին Թումանյանը դիմում էր ոչ թե որպես գրական հեղինակի, այլ որպես մտքի ուղեկցի ու հոգևոր խորհրդատուի:

Պատերազմի տարիներին Թիֆլիսում նա կոչ էր անում թատրոններին՝ ցուցադրել Շեքսպիրի գործերը, կազմակերպել գրական ասուլիսներ: Եվ քանի որ նույն օրն էին մահացել Շեքսպիրն ու Սերվանտեսը, Թումանյանը գրում է. «Համաշխարհային գրականության հորիզոնի վրա միաժամանակ մայր մտան երկու հսկայական արեգակ՝ Շեքսպիր և Սերվանտես: Աշխարհում ով էլ ասպարեզ իջնի, միևնույն է, գերազանց է բրիտանական հանճարի փայլը: Պետք է աշխարհում տարածել Շեքսպիրի աստվածային «բռնակալությունը»»: Շեքսպիրը հոգևոր հաց էր Թումանյանի համար:

Թումանյանի թանգարանն ամեն անգամ մի նոր բացահայտում է ներկայացնում հանճարեղ Լոռեցու կյանքից, որը անսպառ մի շտեմարան է:

«Պեղումները» շարունակվում են…

Սուրաբյա ՂԱՋԱՐՅԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

«ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԸ». ՆՈՐՈՎԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԴԵՐԱՍԱՆ ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԵՏ

թե՞ մեր օրերի դժվարություններն ու նվաստացումներն են ինձ դրան տանում, իրոք, չեմ հասկանում: Հիշեցի հայտնի ազգագրագետ Արուսյակ Սահակյանի պատմությունն այն մասին, որ դաշտային աշխատանքների ժամանակ ինքը, Սարգիս Հարությունյանը և այլք գնում են՝ գտնելու մի պապիկի, որը պիտի պատմեր «Սասնա ծռերը», ու իրենք էլ մագնիտոֆոնով գրանցեին. 70-ական թվականներն էին: Պապիկը սկսեց պատմել, պատմել, ու երբ հասավ այն պահին, որ Մսրա Մելիքը խաբեությամբ ու խարդախությամբ Դավթին հորն է նետում, լռեց երկար ժամանակ: Մտածեցին, որ ծեր մարդ է, հավանաբար մոռացել է ու դրա համար է լռում: Բայց ի՞նչ նկատեցին. ծերունու աչքերից արցունքները հորդում էին. ինքն ամբողջությամբ ապրում էր Դավթի հոգեվիճակը, տխրում, ուրախանում, հպարտանում հերոսների հետ… Այդ նույն զգացումները ես ունեցել եմ «Սասունցի Դավիթը» ընթերցելիս,- շարունակում է դերասանը,- ես չեմ հասկանում՝ ինչպե՞ս է այս ամենը գրել հեղինակը, ի՞նչ հոգեկան ապրումներ է ունեցել նա այդ պահերին: Ընթերցելու ժամանակ ես էլ եմ դադարներ ունեցել: Այնքան պիտի կարդաս, որ այդ բոլոր հույզերը քեզ համար դառնան սովորական, ու կարողանաս դրանք փոխանցել հանդիսատեսին: Լուրջ բեմադրիչներն այդպես են խորհուրդ տալիս՝ կարողացիր ապրեցնել հանդիսատեսին, ոչ թե դու ապրիր այդ բոլոր զգացմունքները: Պետք է շատ աշխատել, որ քո ներսից հանես այդ ապրումը ու փոխանցես դիմացինիդ…

Մեր էպոսում դեռ շատ կոդավորումներ կան, որոնք բացահայտման կարիք ունեն, ու պիտի շատ աշխատել այդ ուղղությամբ: Ես կարծում եմ, որ Չենով Օհանի ձայնը մեր մտավորականության ձայնն է: Նա առայժմ օտար գաղափարախոսության ազդեցության ներքո է: Դավիթը հորում եղած ժամանակ մեր քնած ու միամիտ ժողովուրդն է խորհրդանշում, իսկ սարը բարձրացած Չենով Օհանը, որ Դավթին է կանչում, մեր մտավորականությունն է, որը, ձերբազատվելով օտար ազդեցությունից, շուտով կդիմի «քնած» ժողովրդին ու կարթնացնի նրան: Ես հավատում եմ դրան…»,- եզրափակեց դերասանը ու անցավ իր հիմնական առաքելությանը:



Կարդաց այն հատվածը պոեմից, որում պատկերված են ավազակ հարկահանների՝ Բադին, Կոզբադին, Սուդին, Չարխադին, խայտառակ վերադարձն ու Մսրա կանանց ծաղր ու ծանակին արժանանալու տեսարանը, հոր զենքն ու զրահը ձեռք բերած Դավթի կոչը, Մսրա Մելիքի ու Դավթի մենամարտը և Մելիքի մահը:

Դահլիճն անէացած ունկնդրում էր Վարդան Պետրոսյանի վարպետ կատարումը ու մտովի տեղափոխվում մեր դյուցազունների մղած հերոսական պայքարի թոհուբոհի մեջ: Շնորհալի դերասանը ուղղակի կերտում էր էպոսի կին թե տղամարդ հերոսներին: 15-20 րոպե շարունակ հանդիսատեսը հիացած վայելում էր այդ կատարումը:

Դերասանն այնքան է տարված Թումանյանի ստեղծագործությամբ, որ ծրագրել է մի ներկայացում՝ նվիրված Թումանյանին՝ հեքիաթների և «Սասունցի Դավիթը» պոեմի ընդգրկումով:

Վերջում թանգարանի տնօրեն Լուսինե Ղարախանյանը շնորհակալություն հայտնեց դերասանին՝ էպոսի ազգային ոգին հանդիսատեսին փոխանցելու համար, և հավաստիացրեց ներկաներին, որ շուտով պոեմի այդ ընթերցումը հնչյունային ձևավորում կստանա ու կշրջի մեր դպրոցներով, որպեսզի դպրոցականները ևս հաղորդակցվեն մեծերի հետ:

Այնուհետև ներկաները թանգարանի ցուցասրահում ծանոթացան Հովի. Թումանյանի պոեմի՝ էպոսից արված բառարանի ձեռագիր նմուշներին և Ստեփան Լիսիցյանի «Հայ բանաստեղծներ» մատենաշարով 1904 թվականին տպագրված Թումանյանի «Սասունցի Դավիթը» պոեմին:

Սուրաբ ՂԱՋԱՐՅԱՆ

Լուսանկարները՝ Լ.Ղարախանյանի ֆբ էջից


70-ԱՄՅԱ ՄԻԱՎՈՐՈՒՄ

«1944 թվականին արդեն 47-ամյա բանակի գեներալ Հ. Բաղրամյանը Հայրենական պատերազմի հաղթական ավարտի տասը ռազմածաղկատներից՝ ութի հրամանատար-մարշալներ Ժուկովի, Վասիլևսկու, Կոնևի, Ռոկոսովսկու, Տալբուխինի, Մալինովսկու, Մերեցկովի և Գովորովի կողքին էր հավասարապես, դա խոսում է նրա տաղանդավոր և մեծ զորապետ լինելու մասին»:

Մամուլից

Հոկտեմբերի 16-ին Երևանում՝ ՀՀ Մարշալ Բաղրամյանի անվան վետերանների միավորում հասարակական կազմակերպության դահլիճում, հանդիսավոր նշվեց կառույցի 70-ամյակը: 2022թ. դեկտեմբերի 6-ին Վետերանների միությունում անցկացվել է Հովհաննես Բաղրամյանի ծննդյան 125-ամյակին նվիրված միջոցառում, որին ներկա են եղել լեգենդար հրամանատարի հարազատները, նաև թոռը՝ Իվան Բաղրամյանը, պաշտպանության նախարարության, դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ, վետերանների շարժման առաջնորդներ: Միջոցառման ընթացքում բացվել է հուշատախտակ, որի համաձայն՝ Վետերանների միությունն այդ օրվանից կրում է Հովհաննես Բաղրամյանի անունը:

Նիստին ներկա էին միավորման անդամները, տարածքային և քաղաքային խորհուրդների նախագահները, ՀՀ ՊՆ ներկայացուցիչներ, Հայաստանում Ռուսաստանի դեսպան Սերգեյ Կոպիրկինը, Հայաստանում Բելառուսի Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար Իննա Կուդրուկը, Երևանում Ռուսական տան և Մոսկվայի տան տնօրեն Հայկ Մելիքյանը, «Հարմոնիա» և «Անմահ գունդ» հասարակական կազմակերպությունների ղեկավարներ, ներկայացուցիչներ, «Բերդ» մշակույթի կենտրոնի պատվիրակությունը, այլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Առավել ողջունելի էր Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասնակցությունը: Առաջին շարքում էին 100-103 տարեկան 6 վետերաններ՝ կարմիրբանակային Ներսես Սիմոնյան՝ 103 տարեկան, Մեծ Հայրենականի վետերաններ Վոլոդյա Գալստյան՝ 101 տարեկան, Միշա Սահակյան՝ 100 տարեկան, Ասատուր Բազիյան՝ 103 տարեկան, իսկ Գալինա Ֆեդերովան ու Գալինա Պետուխովան երկար ժամանակ աշխատել են բլոկադայի պայմաններում: Ներկա էին նաև Մոսկվայում գործող «Դիալոգ» ՀԿ նախագահ Յուրի Նավոյանը, ներկայացուցիչներ:




Ներկաներին ողջունեց միավորման նախագահ, գնդապետ Սիմոն Եսայանը: Ողջույնի խոսքով հանդես եկան նաև պատանի սահմանապահները: Հնչեց ՀՀ օրհներգը, եղավ լռության րոպե՝ Հայրենական մեծ պատերազմում ու Արցախյան բոլոր պատերազմներում նահատակված քաջորդիների հիշատակին: Անդրադառնալով միավորման պատմությանը՝ Ս. Եսայանը նշեց. «1956 թվականին Մոսկվայում մարշալ Ժուկովի նախաձեռնությամբ ստեղծվեց վետերանների միավորում: Այն ժամանակ յուրաքանչյուր հանրապետությունում այն ուներ իր անվանումը: Հայաստանում այն կոչվում էր «Խորհրդային վետերանների երևանյան սեկցիա»: Յոթ տասնամյակ շարունակ վետերանների միավորումն իր գործունեությամբ նպաստել է Հայրենական մեծ պատերազմի վետերանների համախմբմանը, նրանց վաստակի գնահատմանը, հայրենիքի պաշտպանության գործում ունեցած ավանդի արժևորմանը և երիտասարդ սերնդին հայրենասիրական ոգով դաստիարակելու գործին»: Այսպիսով, սերնդեսերունդ պահպանվում է հիշողությունն առայժմ պատմության մեջ ամենաարյունալի համաշխարհային պատերազմի մասին և նրանց, ովքեր ջախջախեցին ֆաշիզմը: Տեղեկություններ տվեց նաև Երկրորդ համաշխարհային պատերազմի մասին, որին մասնակցել են տասնյակ երկրներ: Այդ արյունալի տարիներին 70 միլիոնից ավելի մարդ է զոհվել՝ զինվորականներ, խաղաղ բնակիչներ: Հայ ժողովուրդը Մեծ Հայրենականում նշանակալի դեր է ունեցել: 600 հազարից ավելի հայ է մասնակցել պատերազմին, գրեթե կեսը ռազմիկներ: Պատերազմին մասնակցել է ավելի քան 10 հազար հայուհի, որոնցից 4000-ը ՀԽՍՀ-ից, 1800-ը՝ Արցախից, մյուսները՝ ԽՍՀՄ այլ հանրապետություններից և սփյուռքից: Պատերազմին մասնակցել են 64 հայ գեներալ: Պատերազմից հետո գեներալի կոչում է ստացել պատերազմի մասնակից ևս 83 հայ: Մեզ համար հպարտություն է ունենալ Խորհրդային Միության մարշալ, կրկնակի հերոս Հովհաննես Բաղրամյանի, զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Համազասպ Բաբաջանյանի, ծովակալ Հովհաննես Իսակովի՝ Տեր-Իսահակյանի, ավիացիայի մարշալ Սերգեյ Խուդյակովի՝ Արմենակ Խամփերյանցի նման հայրենակիցներ: Ս. Եսայանը նշեց՝ իր ղեկավարած միավորումը համագործակցում է պետական կառույցների ու տարբեր հասարակական կազմակերպությունների հետ: Առանձնակի կարևորեց «Դիալոգ» ՀԿ-ի դերը, որի նախագահի հետ հուշագիր են կնքել: Ասաց. «Մեզ համար կարևոր փուլ էր 2024 թվականին «Վետերան» ամսագրի հրատարակումը՝ հայերեն և ռուսերեն լեզուներով: Առաջին իսկ օրերից հրատարակությանն աջակցում է Հայաստանի աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը»:

Իր շնորհավորական խոսքում ՀՀ-ում ՌԴ դեսպան Սերգեյ Կոպիրկինը կարևորեց Մեծ Հայրենականի վետերանների դերն ու գործունեությունը մեր երկու երկրների և ժողովուրդների հարաբերություններում՝ նպաստելով ընդհանուր պատմության հիշողության պահպանմանը: «Ռուսաստանի և Հայաստանի միջև հարաբերությունները այժմ վերապրում են մի փուլ, որը պահանջում է փոխըմբռնում և նոր հավասարակշռության որոնում: Սակայն անկախ քաղաքական իրավիճակի փոփոխություններից՝ մեր ընդհանուր պատմությունը, համատեղ հաղթանակները և մարշալ Բաղրամյանի կերպարը մնում են մեր ժողովուրդների համար հզոր միավորող գործոններ:

☞5

ՅՈ՞ ԵՐԹԱՍ

ԳՈՆԵ ՄԵՐ ՀՈՒՇԵՐՈՒՄ ԱՐՑԱԽԸ ԿԱՆԳՈՒՆ ՄՆԱ



Արցախի հայաթափման ու բնակչության բռնատեղահանման 3-րդ տարելիցի հետ կապված՝ զրուցեցինք տեղահանված արցախցի կնոջ՝ Դիանա Հարությունյանի հետ՝ վերհիշելով հայտնի իրադարձության մղձավանջն ու ծանր ապրումները: Դիանա Հարությունյանը ծնվել ու մեծացել, կրթություն է ստացել, ամուսնացել ու երկու երեխաների մայր է դարձել Արցախի Ասկերան քաղաքում: Ջերմ հիշողությամբ է խոսում հարազատ Ասկերանի եւ նրա բնակիչների մասին: Անչափահաս երեխաների մայրը հուզմունքով է հիշում Արցախի շրջափակումը, սեպտեմբերյան պատերազմն ու բռնատեղահանվելու դառնությունը, բայց հոգու խորքը տունդարձի հույսով է լցված:

Շրջափակում

Սկզբնական շրջանում դեռ չէր զգացվում շրջափակման իրական վտանգը: Շատերս մտածում էինք, որ ուր որ է ապաշրջափակում կլինի: Սակայն քանի գնում, քանի սրանում էր վտանգն ու անապահովության զգացումը: Չգիտես ինչու, մտածում էինք, որ եթե դիմադրում ենք ու այդքան զրկանքներ համբերատար կրում, ապա ինչ-որ լավ բան տրվելու է մեզ ի պատասխան: Միամտաբար կարծում էինք, որ եթե այդքան զրկանքներով հանդերձ՝ մենք մեր հողից ու հայրենիքից չհրաժարվենք, աշխարհը կճանաչի Արցախի անկախությունը եւ մեր ինքնորոշման իրավունքը: Հիմա ենք հասկանում, որ այդպես մտածելը թերեւս անհեթեթ էր: Ինչեւէ, դիմադրել ենք ու պայքարել մեր հայրենիքում ապրելու համար: Բարեբախտաբար սոված օրեր գրեթե չենք ունեցել, կարողացել ենք ցորեն գտնել ու սեւ ալյուր ստանալ, օգտագործել հացի համար: Սուղ պայմաններում էլ մեկս մեկին օգնում էինք: Շատ ծանր էր դեղորայքի բացակայության պայմաններում հիվանդներին բուժելը, խնամելը: Երեխաս ջերմություն ուներ, բայց դեղ չէր գտնվում, շատ էի մտահոգվել: Կայքում գրառում կատարեցի օգնության խնդրանքով, եւ բարի մարդիկ դեղ գտան մեզ համար: Ծանր էր, որ վառելիքի բացակայության պայմաններում ստիպված էինք ոտքով շարժվել, հերթեր կանգնել: Բայց լավատեսությունը չէր լքում մեզ: Մտածում էինք, որ վերջը լավ կլինի:

Սեպտեմբեր, 2023

Դժվարանում եմ մտաբերել, թե որ պահին դաժան իրականությունը, այսպես ասած՝ մեզ «տեղ հասավ»: Հիշում եմ, որ սեպտեմբերին մայրս սկսեց բրդերը լվանալ, մշակել: Նախատում էի, որ իզուր է չարչարվում, տագնապ ու մտավախություն ունեի, որ չենք վայելելու: Մայրս վստահությամբ կրկնում էր, որ ռուսը չի թողնի մեզ այս վիճակում, այլ կպաշտպանի մեզ: Ահա սեպտեմբերի 19: Արցախը ռմբակոծվում է, իսկ ռուսը էական քայլեր չի ձեռնարկում: Միայն մեքենաներ է ուղարկում բնակավայրեր՝ բնակչությանը տեղահանելու եւ օդանավակայանում տեղավորելու համար: Մայրս, երեխաներս ու ես բազմաթիվ մեր հայրենակիցների հետ նույնպես ապաստանեցինք այնտեղ: Դժվար ու անմարդկային պայմաններում ստիպված էինք համակերպվել: Մի կողմից պայթյունների ձայները, վատ լուրերը, սննդի բացակայությունը, իսկ մյուս կողմից էլ անհանգստությունը մեր տղամարդկանց համար, որոնք դարանակալված թշնամու կողմից շրջափակման մեջ էին հայտնվել, ուղղակի հյուծում էին մեզ: Սկզբի երեք օրը ռուս խաղաղապահների կողմից օրական մի անգամ սնունդ էինք ստանում՝ մի քիչ եփած բրինձ, հետո դա էլ չկար: Սոված, անքուն, տագնապային ապրումների մեջ սպասում էինք… Ամուսինս զինծառայող էր, նա էլ էր դեռ շրջափակման մեջ, եւ ոչ մի լուր չունեի: Օդանավակայան եկավ նախագահ Շահրամանյանը եւ մեզ հայտնեց, որ տրամադրվում է բենզին: Նրանք, ովքեր կամավոր ցանկանում են դուրս գալ Արցախից, կարող են դուրս գալ: Նա այնպես բացատրեց, որ բնակչության դուրս գալը ժամանակավոր միջոց է ստեղծված իրավիճակում, եւ շատերը չպատկերացրին, որ Արցախը լքելու են առհավետ: Մենք չէինք պատրաստվում որեւէ քայլի դիմել, քանի դեռ ամուսինս մեր կողքին չէր: Բարեբախտաբար հաջողվում է նրանց դուրս գալ շրջափակումից եւ տուն գնալ: Երբ հեռախոսով կապվում է հետս, նրա տարօրինակ հարցերից հասկանում եմ, որ անտառներում գտնվելով՝ ներկա իրավիճակից տեղեկություն չեն ունեցել: Հարցնում է, թե ինչու տանը չենք եւ հայտնում, որ ինքը տուն է գնում: Մինչեւ այդ քաոսից գլուխ հանեինք, տեղի է ունենում սեպտեմբերի 25-ի ողբերգությունը, Հայկազովի բենզինի պահեստի պայթյունը, որը ավելի է խելագարեցնում մեզ: Իմ վերլուծությամբ՝ պայթյունը կանխամտածված, դիտավորյալ կազմակերպված հանցագործություն էր արցախյան գենոֆոնդի ոչնչացման նպատակով: Այդքանից հետո մարդիկ պարզապես չէին կարող պայքարել եւ նախընտրեցին դուրս գալ Արցախից:



Տեղահանություն

Մեր ընտանիքի հետ մտերիմ հարաբերությունների մեջ գտնվող ընտանիքից տղամարդիկ ենք կորցրել, որոնք գնացել էին բենզին ստանալու: Մեզ է դիմում այդ հարազատ ընտանիքի կինը՝ խնդրանքով, որ իրենց ավտոմեքենան հանենք: Արդեն սեպտեմբերի 28-ը կամ 29-ն էր: Քաղաքում գրեթե մարդ չկար: Հայրենի Ասկերանս դատարկվել էր, ինչպես երբեւէ: Մենք էլ չէինք կարող մնալ: Այնպես ենք կազմակերպում, որ մեր ընտանիքը հենց այդ մեքենայով դուրս գա: Մեքենան վնասված էր, ապակին ջարդվել էր՝ պայթյունից հետո մեքենան գործի դնելու եւ տեղափոխելու անհրաժեշտությունից ելնելով: Նորոգելու ոչ հնարավորություն կար, ոչ ժամանակ: Ադրբեջանական զինված ուժերն արդեն տեղակայվել էին քաղաքի ներքեւում: Տնից դուրս եկանք սրտնեղած, աննկարագրելի տխուր ապրումների մեջ: Ամուսինս վարում էր, ես նստել էի կողքը՝ փոքր երեխաս ձեռքիս, որը ջերմության մեջ էր: Հետեւիս մայրս էր, որը նույնպես ջերմում էր, եւ մեծ երեխաս՝ աղջիկս: Երբ հասանք Ասկերանի բերդապարիսպի մոտ, մեր մեքենան կանգնեցրին ադրբեջանական զինված զինվորները, հավանաբար նրանց հատուկջոկատայիններն էին՝ համազգեստով եւ դիմակավորված: Ամուսինս ասացին, որ բացի բեռնախցիկը: Մինչ ամուսինս բացում էր եւ ցույց տալիս պարունակությունը, դիմակավորված զինվորներից մեկը մոտենում է ավտոյին եւ կոտրած ապակու արանքով սկսում հայացքով զննել մեզ: Դիմակավորված դեմքից երեւում էին միայն աչքերը եւ նկատվում էր, որ նա կարծես թե ժպտում էր: Ես գունատվել էի: Չէի հասկանում այդ ժպիտը: Նրանցից ամեն ինչ սպասելի է: Մտածում էի, ինչ պետք է անեմ, եթե երեխայիս վերցնեն ձեռքիցս: Դիմադրելն անիմաստ է: Մենք՝ անզեն, իրենք՝ զինված: Մեկիս վնասեն՝ մյուսներին վնասելը չի ուշանա… բոլորիս աչքի առաջ…Չգիտեմ ես որքանով եմ լավ մայր, բայց այդ պահին մտածում էի, որ ավելի լավ է իմ երեխան իմ ձեռքով գնա… Մինչ ես այդ մղձավանջն էի ապրում, լսելի էր բեռնախցիկի փակվելու ձայնը եւ ռուսերեն լեզվով՝ «можете езжать»-ը: Ինչպե՞ս համակերպվել, ո՞նց մարսել այն հանգամանքը, որ ուրախ պետք է լինես այն բանի համար, որ քեզ «թույլատրել են» դուրս գալ քո բնօրրանից, քո նահատակների արյունով շաղախված հողից, քո հայրենիքից… Շփոթմունքից անգամ հրաժեշտ չտվեցի Մայրաբերդին, այն պարիսպին, որտեղով անցել է մանկապատանեկությունս, երիտասարդությունս, հասունությունս, կյանքս…

48 ժամ տեւեց մեր տնից մինչեւ Հակարիի չարաբաստիկ անցակետ հասնելը: Մի կերպ դիմացանք անմարդկային պայմաններիս՝ սոված, հիվանդ, մտահոգ ու տանջված: Հակարին անցնելուց հետո Կոռնիձորում մեր հայրենակիցները մեզ սնունդ ու ջուր տվեցին: Լացեցի: Չգիտեմ նրանց հոգատարության ու կարեկցանքի ազդեցությունի՞ց, թե՞ վերջապես գիտակցելուց, որ ահա եւ վերջ՝ սկսվեց հայրենազուրկներիս բարդ ճակատագիրը:

Կյանքը տեղահանվելուց հետո

Որոշ ժամանակ մնացինք Գորիսում, ուշքի եկանք փոքր-ինչ, հետո տեղափոխվեցինք Երեւան: Ամեն տեղ էլ լավ վերաբերմունքի հանդիպեցինք, չնայած նաեւ բացառություններ կային: Ադապտացիոն շրջանն էր դժվար, աղջիկս դպրոց գնաց, ես չէի կարողանում աշխատել, քանի որ ստիպված էի երեխաների խնամքով ու հոգսերով զբաղվել, իսկ մեծ քաղաքներում դժվար է համատեղել: Սակայն միայն ամուսնուս աշխատավարձով էլ հնարավոր չէր տան վարձի, կոմունալ ծառայությունների եւ ընտանեկան այլ հոգսերի ծախսերը փակել: Որոշեցինք փորձել հիմնավորվել ՌԴ-ում, որտեղ երկու տարի է՝ արդեն ապրում ենք, բայց ուշք ու միտքներս՝ ուղղած դեպի Հայաստան, Եռաբլուր: Ներկայում Հայաստանում եմ, մի քանի օրով եկել եմ Երեւան: Եռաբլուրը լրիվ ուրիշ էր ինձ համար, երբ համարձակվեցի որդուս ձեռքից բռնած այնտեղ այցելել: Որքա՜ն ուժեղ են որդեկորույս մայրերը, որ տանում են իրենց սրտում այդ անտանելի ցավը…Արցախյան առաջին պատերազմից հետո էլ դժվար էր, բայց այն ժամանակ սփոփանք կար՝ ազատագրված հայրենիք: Մի՞թե այսպես անսփոփ էլ պիտի մնանք:

Հույս

Արցախ վերադառնալու մտքեր ունենում եմ, բայց լավատեսություն այդ հարցում չունեմ: Հաճախ եմ երազում տեսնում, թե ինչպես եմ Ասկերանի պարսպի մոտով գնում մեր տուն տանող ճանապարհով եւ իմ արդեն կնճռոտված ձեռքով բացում եմ մեր տան դարպասը: Գուցեեւ այն պատճառով չեմ հրաժեշտ տվել Մայրաբերդին, որ հոգու խորքում հավատում եմ, թե դեռ վերադառնալու եմ: Աշխարհաքաղաքական բարդ շրջադարձեր են տեղի ունենում, որոնցից դժվար է գլուխ հանել եւ հասկանալ, թե ինչ ճակատագիր կունենան Արցախն ու մենք, միգուցե այնտեղ ապրելու հնարավորություն այլեւս չունենանք, բայց հույս ունեմ, որ նորից ոտք եմ դնելու իմ հայրենի վայրեր: Չեմ ուզում բաց թողնել հիշողությունս, ուզում եմ, որ գոնե մեր հուշերում Արցախը կանգուն մնա:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՎԵՏԵՐԱՆՆԵՐ

ԵՐԵԿՈ՝ ՆՎԻՐՎԱԾ ՎԱԶԳԵՆ ՍԻՍԼՅԱՆԻ 70-ԱՄՅԱԿԻՆ

Հոկտեմբերի 30-ին Երևանում՝ Արևմտյան Հայաստանի կառավարության դահլիճում, «Վահագն» ՌՀԲՀԿ հիմնադիր նախագահ Կարապետ (Մորուք Կարո) Կարապետյանի նախաձեռնությամբ, կայացավ Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի (ՀԱՀԳԲ-ASALA) վրիժառու Վազգեն Սիսլյանի 70-ամյա հոբելյանին նվիրված հանդիսավոր երեկո: Ներկա էին հոբելյարի մարտական ընկերներ, Արցախյան գոյամարտի մասնակիցներ, ՀՀ-ում գործող ռազմահայրենասիրական հասարակական կազմակերպությունների (ՀԿ) ներկայացուցիչներ, ղեկավարներ, հյուրեր: Հանդիսավոր երեկոն բացեց գրականագետ, բ. գ. թ., մանկավարժ Նադյա Անտոնյանը՝ խոսքում ներկայացնելով հոբելյարի կենսագրականը, հերոսական գործունեության մասին դրվագներ: Վ. Սիսլյանի տարեդարձի առթիվ Ֆրանսիայից տեսակապով հանդես եկավ Արևմտյան Հայաստանի նախագահ Արմենակ Աբրահամյանը: Շնորհավորանքի խոսքով ելույթ ունեցան գրականագետ, պրոֆեսոր Սամվել Մուրադյանը, գրող, հրապարակախոս Արծրուն Պեպանյանը, ԱՀ ԱԺ նախագահի Նելլի Հարությունյանը, Սիսլյանի մարտական ընկեր Ալեք Ենիգոմշյանը, կինոռեժիսոր Սամվել Թադևոսյանը, այլք: Բոլոր ելույթներում կարևորվեց Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի դերը, որի անդամ է Վազգեն Սիսիլյանը՝ ծնված 1956 թ. հոկտեմբերի 20-ին Բեյրութի արվարձան Բուրջ Համուդ շրջանում:

1986 թ. ավարտել է Փարիզի Սորբոնի համալսարանը՝ լեզվաբանություն մասնագիտությամբ: Լիբանանում աշխատել է որպես մեխանիկ, 1979-1981 թթ. մասնակցել է մարտական գործողությունների: Ս. Մուրադյանն իր խոսքում ողջ հայության կողմից շնորհավորեց հերոսին՝ մաղթելով երկար տարիների կյանք, որպեսզի իր աչքով բոլորիս հետ տեսնի մեր հաղթանակները՝ մեր հայրենիքի ամբողջականությունն ու անվտանգությունը: Ներկայացվեց նաև հատված Ս. Թադևոսյանի «Վան» ռազմագործողությանը նվիրված ֆիլմից:



1981թ. սեպտեմբերի 24-ին, ՀԱՀԳԲ-ի «Եղիա Քեշիշյան» անվանումը կրող չորս հոգանոց անձնասպանական ջոկատը (Վազգեն Սիսլյան, Գևորգ Գյուզելյան, Արամ Բասմաջյան, Հակոբ Ջուլֆայան) գրավում է Փարիզի թուրքական հյուպատոսարանը: Գործողությունը կոչվում էր «Վան»: Գործողության սկզբում փոխհրաձգության հետևանքով մարտական խմբի ղեկավար Վազգեն Սիսլյանն ու Հակոբ Ջուլֆայանը ծանր վիրավորվում են, սակայն մարտախմբին հաջողվում է իրադրությունը հսկողության տակ առնել: Չեզոքացվում են հյուպատոսարանի զինված անվտանգության թուրք գործակալները, որոնցից մեկը սպանվում է փոխհրաձգության ընթացքում: 15 ժամ տևող գործողությունից հետո մարտախումբը մերժում է հյուպատոսարանը լքել զինաթափված վիճակում, այլ որպես խորհրդանշական ակցիա, թուրք հյուպատոսին գերի ունենալով, զինված դուրս է գալիս հյուպատոսարանի շենքից: «Եղիա Քեշիշյան» մարտախմբի անդամները դատապարտվեցին 7-ական տարվա ազատազրկման, բայց ազատվեցին 5,5 տարի հետո, քանի որ ֆրանսիական դատարանը նրանց ահաբեկիչ չճանաչեց: Եվ «Վան»-ի ղեկավարի հոբելյանին նվիրված երեկոյին ռազմահայրենասիրական, ազգագրական, օպերային երգերի կատարումով հանդես եկան «Հայ լաո» դուետի երգիչներ Տիգրան-Վարդան Թադևոսյան երկվորյակ եղբայրները, Գրիգոր Համբարյանը, իսպանաբնակ օպերային երգիչ Վահրամ Թադևոսյանը՝ Վանո Թադեոն, փարիզաբնակ օպերային երգիչ միջազգային վոկալիստների մրցույթների Գրան պրի մրցանակակիր, «Կոմիտաս» եռակի մոդելակիր, Վիվոն քաղաքի պատվավոր քաղաքացի Ադամ Բարոն: Ընթացքում Վ. Սիսլյանին շնորհավորեցին և մեդալներ, պատվոգրեր, դիպլոմներ հանձնեցին ռազմահայրենասիրական և այլ ՀԿ-ների ղեկավարներն ու ներկայացուցիչները, որոնք ներկա էին երեկոյին:

Ինչպես գիտենք, «Վահագն»-ի հիմնադիր Կ. Կարապետյանի նախաձեռնությամբ, ռազմական, մշակութային, գիտական, մարզական և այլ բնագավառներում հայրենիքին ծառայություն մատուցած արժանի անձինք պարգևատրվում են «Իշխանի շղթա»-ով, որի պահապանն ինքն է: Եվ փոխանցիկ շղթան Վ. Սիսլյանի 70- ամյակին նվիրված երեկոյի ընթացքում փոխանցվեց ՀԱՀԳԲ-ի հերոս մարտիկներից Մարտիրոս Ժամկոչյանին:

Երեկոն ավարտվեց հյուրասիրությամբ, առիթ էր նաև, որ կրկին հանդիպեցին Արցախյան հերոսամարտերի մասնակիցներ, մտավորականներ:

70-ԱՄՅԱ ՄԻԱՎՈՐՈՒՄ

Հենց միասնության շնորհիվ մենք հաղթեցինք ամենադժվար պատերազմում, և հենց այս միասնության վրա պետք է հույսը դնենք ժամանակակից մարտահրավերներին արձագանքելիս», -ասաց Կոպիրկինը:

ՀՀ-ում Բելառուսի Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար Ի. Ն. Կուդրուկը նույնպես հանդես եկավ ողջույնի խոսքով: «Մենք հպարտանում ենք հայ ժողովրդի հետ մեր ընդհանուր հերոսական պատմությամբ: 2025 թվականին ԱՊՀ-ում և աշխարհում նշեցին Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 80-ամյակը: Խորհրդային յուրաքանչյուր հանրապետություն իր ներդրումն ունեցավ ֆաշիզմի ջախջախման գործում: Սակայն անվիճելի է նաև այն փաստը, որ «շագանակագույն ժանտախտի» դեմ պայքարում ամենից շատ տուժեց Բելառուսը՝ և՛ մարդկային կորուստներով, և՛ աղետալի ավերածություններով», -ասաց նա:

Իսկ Երևանում Ռուսական տան ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Անաստասիա Կուրբատովան, շնորհավորելով հոբելյանի առթիվ, Վետերանների միավորմանը փոխանցեց Ժողովրդական ճակատի «Հիշատակի կրակ» տասներորդ միջազգային շարժման շրջանակում Հայաստան բերված «Հիշատակի կրակի» խորհրդանիշ լապտերը:

«Վետերան» ամսագրի գլխավոր խմբագիր, Վետերանների միության փոխնախագահ Ելենա Շուվալա-Պետրոսյանը, որը ՀՀ-ում ռուսական սահմանապահների վարչության կողմից արժանացավ պատվոգրի, անդրադարձավ «Դիալոգ» ՀԿ-ի հովանավորությամբ հրատարակված գրքերին, որոնց շարքում են նաև վետերանների աշխատանքներ: Ասաց՝ 100-ամյա Լաչին Ստեփանյանի և 104-ամյա Հրանտ Պողոսյանի գրքերն արդեն հրատարակվել են: 2027-ի հունվարին կհրատարակվի 105-ամյա վետերանի գիրքը:



Ողջույնի խոսքով հանդես եկավ նաև Աջափնյակի վետերանների տարածքային խորհրդի նախագահ գնդապետ Ն. Ավանեսյանը: ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցչի ելույթից հետո ՀՀ պաշտպանության նախարարի անունից Միավորման աշխատակիցներին, վետերանների տարածքային եւ քաղաքային խորհուրդների նախագահներին պարգևատրեց հուշամեդալներով և պատվոգրերով: Պատվոգրի արժանացած Ոսկի Զաքարյանն ասաց՝ արդեն 30 տարի է՝ աշխատում է միավորումում և շատ վետերանների է հանդիպել, այդ թվում՝ բարձրաստիճան զինվորականների, հերոսների:

Եղան այլ ելույթներ նաև ներկաների կողմից: Հանդիսավոր նիստի վերջում Ս. Եսայանը միավորման աշխատակիցներին, վետերանների տարածքային և քաղաքային խորհուրդների նախագահներին պարգևատրեց Մոսկվայում ԱՊՀ երկրների համակարգող խորհրդի նախագահի կողմից տրված պատվոգրերով եւ կրծքանշաններով: Պատվոգրեր ու խորհրդանշական նվերներ հանձնեց նաև Վետերաններին: Վետերանական շարժմանն աջակցելու, պատմական հիշողությունը պահպանելու և հաղթանակած սերնդի սխրանքն անմահացնելու գործում ունեցած նշանակալի ավանդի համար «Դիալոգ» կազմակերպության ղեկավար, բարերար, մարշալ Ի. Խ. Բաղրամյանի անվան Հայաստանի վետերանների միավորման վստահելի գործընկեր, «Դիալոգ» գրքերի մատենաշարի հիմնադիր Յուրի Նավոյանը պարգևատրվեց ԱՊՀ վետերանների (կենսաթոշակառուների) հասարակական կազմակերպությունների միջազգային միության համակարգող խորհրդի պատվավոր նշանով: Գեներալ-գնդապետ Վ. Պ. Վոլկովի ստորագրությամբ Պատվավոր նշանը Յու. Նավոյանին հանձնեց ՀՎՄ նախագահ Ս. Եսայանը:

Վերջում ընթերցվեց միավորման 70- ամյակին նվիրված նիստ ուղերձն աշխարհի ժողովուրդներին: Հանդիսավոր մասից հետո ներկաների համար հանդես եկավ Արցախի «Վարարակն» երկսեռ երգչախումբը: Տեղեկացնեմ՝ համույթը, Արմինե Յախշյանի ղեկավարությամբ, Երևանում վերակազմավորվել ու շարունակում է գործունեությունը «Դիալոգ» ՀԿ նախագահ Յուրի Նավոյանի նախաձեռնությամբ ու կազմակերպության հովանավորությամբ: Համերգը վետերաններին նվեր էր «Դիալոգ»-ի կողմից: Վետերանների միավորումում գործում է նաև Մարշալ Բաղրամյանի թանգարանը, որտեղ ցուցադրված են մեծ զորավարի ու հայրենասերի անձնական իրերը, պարգևները, կիսանդրին: Միջոցառման ներկայացուցիչներն այցելեցին նաև թանգարան:

Ջոհրաբ ԸՌՔՈՑԱՆ

ՀԵՐՈՍԱՄԱՏՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԻՎԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (ՍԱՇԿՈ)

2020թվականի 44-օրյա պատերազմը մեր ժողովրդի համար ողբերգական իրադարձություն էր, որում կորցրել էինք ոչ միայն մեր հայրենիքի մի մասը, այլեւ հազարավոր նվիրյալների, որոնք սիրում էին իրենց օջախն ու երկիրը:

Նվիրյալների այդ համաստեղության մեջ Ալեքսանդր Իվանի Հարությունյանը՝ Սաշկոն, եղել ու մնալու է այն լուսավոր աստղը, որից սերունդները ապրելու հավատ են քամելու…

Ալեքսանդր Իվանի Հարությունյանը ծնվել է 1974 թ. փետրվարի 28-ին: Հաճախել է Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոցը: Սովորում էր 7-րդ դասարանում, երբ Արցախում սկիզբ առավ ազգային ազատագրական շարժումը: 1990-ին անդամագրվեց երկրամասում օր օրի ահագնացող զինված պայքարին եւ դարձավ 4-րդ կամավորական վաշտի ամենաերիտասարդ զինվորներից մեկը: Մարտական մկրտությունը ստացավ Ստեփանակերտը շրջափակող թշնամական ուժերի դեմ, նախ՝ քողարկված, ապա բացահայտ զինված պայքարում: Առաջին լուրջ գործողությունը, որին Սաշկոն մասնակցեց, Խոջալվում տեղակայված ադրբեջանական ռազմահենակետի վերացման օպերացիան էր: Դրանից հետո մարտական գործողությունները կրեցին առավել բացահայտ եւ շարունակական բնույթ, որոնցում առավել, քան ակտիվ էր անձնվեր քաջորդին: Պաշտպանական մարտեր 26-ի բարձունքում եւ Ասկերանի սահմանամերձ գյուղերում, հակահարձակողական ու ազատագրական գործողություններ Կարկառաշենի եւ Շուշիի ուղղություններով, նորից պաշտպանական թեժ մարտեր Մարտակերտի ճակատում եւ այդպես մինչեւ 1992-ի աշուն…

1992-ի սեպտեմբերին, երբ նորաստեղծ Ինքնապաշտպանության ուժերի կազմում ստեղծվեց Կենտրոնական պաշտպանական շրջանը, Ալեքսանդր Հարությունյանը, որպես այդ զորամասի հետախուզական ստորաբաժանման շարքային զինվոր, տակավին իր բարձրության վրա էր: Ծառայելով լեգենդար զորամասում՝ Սաշկոն ոչ միայն մասնակցում, այլեւ անմիջական մասնակցություն էր ունենում իրենց ստորաբաժանմանը վերաբերող օպերացիաների մշակման գործընթացներում… Հատկանշական է 1993-ի փետրվարին ծավալված հակահարձակողական օպերացիաներում մեր անմոռաց հերոսի ունեցած ավանդը, մասնավորապես, նրա մասնակցությունը Մարտակերտի շրջանի բռնազավթված տարածքների ազատագրման, Քարվաճառում, Ջաբրայիլում, Հորադիզում, Ղուբաթլվում եւ հարավային ուղղությամբ տեղակայված թշնամական մյուս ռազմահենակետերի վնասազերծման օպերացիաներում: Արցախյան առաջին պատերազմի ավարտին Ալեքսանդր Հարությունյանը մասնակցեց Մարտակերտի շրջանի Յարմջան, Սեյսուլան գյուղերի ազատագրման եւ հարակից Նամիրլի, Շուրաբադ ռազմաբնակավայրերի վնասազերծման գործողություններին եւ հաղթանակով պսակեց իր առաջին պատերազմը…



1994թ. մայիսի 28-ին նա առաջիններից մեկն էր, ով արժանացավ այդ ժամանակ Հայաստանի Հանրապետության բարձրագույն պարգեւը հանդիսացող՝ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի…

Պատերազմից հետո Ալեքսանդրն Արցախի զինված ուժերում ծառայեց մինչեւ 2003 թվականը, որից հետո՝ առողջական վիճակից ելնելով, որպես 2-րդ կարգի հաշմանդամ, զորացրվեց: Հայրենիքին մատուցված ծառայությունների համար նա այդ ընթացքում պարգեւատրվեց նաեւ ԼՂՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով, «Արիության համար», «Շուշիի ազատագրման համար», «Մարտական ծառայություն», «Վազգեն Սարգսյան», «Անդրանիկ Օզանյան» մեդալներով…

Սակայն, այս ամենով հանդերձ, Սաշկոյի համար Հայրենիքին ծառայելու բավականին պատասխանատու եւ պատվաբեր առաքելությունը չավարտվեց: Առջեւում 2016-ի ապրիլյան քառօրյա առճակատումն էր: Նա նորից առաջնագծում էր, բայց այս անգամ արդեն Արցախի ազատամարտիկների միության կից ստեղծված եւ իր հրամանատարությամբ գործող ստորաբաժանման հետ միասին: Սաշկոն մարտական գործողությունների ամենաթեժ կետերից մեկում էր պատերազմի առաջին իսկ օրվանից: Իսկ դա հյուսիսային ուղղությունն էր, որտեղ իր անձնակազմի հետ մնաց մինչեւ հունիսի կեսերը: Մարտական պահպանությանը զուգահեռ մոտ երկու ամիս նա իր անձնակազմի հետ զբաղված էր նաեւ ինժեներական ամրակառույցների ստեղծման աշխատանքներով…Իր ոչ այնքան հասուն տարիքում անցնելով երկու պատերազմ՝ Ալեքսանդր Հարությունյանը շատ լավ էր պատկերացնում, որ Արցախը, գտնվելով ռազմաքաղաքական առանձնահատուկ զարգացումներով ծանրաբեռնված իրավիճակում, եթե ոչ այսօր, ապա ամենամոտ ապագայում վերահաս պատերազմն անխուսափելի է: Եվ դա չուշացավ: 2020 թ. սեպտեմբերի 27-ին սկսվեց երրորդ պատերազմը: Ինչպես նախորդ երկուսում, այս անգամ եւս Սաշկոն նորից առաջին գծում էր… Բայց այս անգամ, ոչ միայն մարտընկերների, այլ նաեւ իր հարազատ որդու հետ: Այն որդու, որն անչափահաս լինելով, իր հետ առաջնագծում էր եղել նաեւ 2016 թ. ապրիլին:

2020 թ. հոկտեմբերի 10-ը Ալեքսանդր Հարությունյանի երկրային կյանքի ամենաճակատագրական օրն էր: Հադրութից հարավ ընկած «9-րդ կիլոմետր» կոչվող տարածքում հակառակորդի կողմից իրականացված կրակային խոցման արդյունքում մարտիրոսվեց իր երկրին ու ժողովրդին ազնվորեն նվիրված Սաշկոն…

Միանշանակ է, որ նրան չենք կարող վերադարձնել, բայց ի հիշատակ նրա եւ ապրողներիս պատվի՝ մենք պարտավոր ենք վերադարձնել Արցախը, հանուն որի ազատության իրենց գիտակցական կյանքն են նվիրել մեր հերոսները:

Արցախի Հանրապետության նախագահի հրամանագրով 2020թ. հոկտեմբերին Ալեքսանդր Իվանի Հարությունյանը արժանացավ Արցախի Հանրապետության հերոսի բարձրագույն կոչման եւ պարգեւատրվեց «Ոսկե արծիվ» շքանշանով:

Հիշենք եւ մեծարենք մեր հերոսին:

(Հերոսի մասին տեղեկությունը վերցված է Արցախի Ազատամարտիկների Միության ֆեյսբուքյան կայքէջից):

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋԻՆ ՇՈՒՆՉԸ ԿՈՎՈՒՄ ԷՐ



Քաջ կոչվում է նա, ով անվախ քայլում է դեպի իր գեղեցիկ մահը:
Արիստոտել

Մոնթե Հայրապետյանն Արցախյան վերջին պատերազմի հազարավոր անմահ հերոսներից է, որն Արցախի Հանրապետության նախագահի կողմից հետմահու արժանացել է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի: Պարգեւը 2021 թ. օգոստոսի 25-ին ծնողների ծննդավայր Քարագլուխ գյուղում հանձնվեց հերոսի հոգեհանգստի արարողության ժամանակ… Գյուղի հանգստարանում է հուղարկավորված: Հարևանությամբ դարձյալ Կովսականում մեծացած ու 2020թ. հոկտեմբերի 12-ին հերոսաբար մարտիրոսված էրիկ Գաբրիելի Սայադյանի շիրիմն է: Կովսականի միջնակարգ դպրոցը Հայաստանի ազգային հերոս Թաթուլ Կրպեյանի անունով էր: Դպրոցի մուտքի մոտ հերոսի քարե կիսանդրին էր, եւ յուրաքանչյուր օր դպրոցականներն առաջինը «ողջունում» էին Մեծն Թաթուլին: Թեկուզ մարտիրոս, Թաթուլը նաեւ այստեղ էր՝ Կովսականում սահմանապահ: Հերոսի անունով էր կոչվում նաեւ քաղաքում գործող ազգագրական երգի ու պարի համույթը՝ Կարեն Մարտիրոսյանի ղեկավարությամբ: Թաթուլն իր հերոսությամբ բոլորին էր ոգեշնչել, առանձնապես կովսականցի դպրոցականներին, երիտասարդներին:

Այս դպրոցում սկսեց իր կրթությունը եւ միջնակարգն ավարտեց կովսականցի Մոնթե Ավետիքի Հայրապետյանը: Լավ էր սովորում, մասնակցում էր դպրոցում կազմակերպվող բոլոր միջոցառումներին, հատկապես սիրում էր խաղալ թատերական ներկայացումներում եւ՝ հերոսների դերեր: 2015 թ. նոյեմբերին դպրոցում ներկա եղա Մուրացանի «Ռուզան» դրամայի բեմականացմանը: Դերակատարները կրթօջախի սաներն էին: Կապուտաչյա Մոնթեն կարծես իր կերպարում էր, խաղում էր հայ իշխաններից մեկի դերը: Դասասենյակում, որտեղ տեղի ունեցավ ներկայացումը, ծնողներն էին, ուսուցիչներ, աշակերտներ: Շատ լավ խաղացին մեր աշակերտները, եւ բոլորն էին հուզված, բարձր տրամադրությամբ: Ջրուցեցի դերասան-աշակերտների, նաեւ Մոնթեի հետ: Սիրում էին իրենց քաղաքը եւ պատրաստ տեր կանգնելու նրան բոլոր ժամանակներում: Մոնթեն չէր որոշել՝ ինչ մասնագիտություն է ընտրելու, սակայն գիտեր՝ Կովսականի տերն է մնալու: Նաեւ զբաղվում էր ձյուդոյով: Բերձորի արվեստի և սպորտի դպրոցի (տնօրեն՝ Գոռ Մանուկյան) հետագայում մանկապատանեկան դպրոցի (տնօրեն՝ Կարինե Մովսեսյան) Կովսականի մասնաճյուղի՝ մարզիչ, այժմ երջանկահիշատակ Տարոն Պողոսյանի սանը շրջանային ու հանրապետական (նաեւ՝ ՀՀ-ում) մրցումների էր մասնակցել, հաճախ դարձել հաղթող կամ մրցանակակիր: Ջյուդոյի նույն խմբում էր պարապում նաեւ կովսականցի Հովհաննես Մխիթարի Սողոմոնյանը՝ ժամկետային զինծառայող, որը նահատակվեց Արցախյան վերջին պատերազմում, հուղարկավորված է Վայոց ձորի Ջառիթափ գյուղում՝ ծնողների ծննդավայրում: Ջյուդոյի մրցումներին նույնպես ներկա եմ եղել, լուսաբանել դրանք: Դարձյալ աչքի էր ընկնում Մոնթեն՝ մրցակիցների (մտերիմ ընկերների) հետ մրցապայքարում: Մրցակից ու հարազատ ընկերն էր նաև Աշոտը Կոստանյանը՝ ծնված 1998թ. Վուրգավան գյուղում: Նա նույնպես հերոսաբար զոհվեց 2020թ. հոկտեմբերի 3-ին:

Մոնթեն ծնվել է 1999 թ. մայիսի 19-ին, Կովսական քաղաքում: Ծնողներն Արցախի Քաշաթաղի շրջանի հարավային այս քաղաք էին եկել Վայոց ձորի Քարագլուխ գյուղից: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո՝ 2017-ին, զորակոչվել է Հայոց բանակ, ծառայել բարեխիղճ ու նվիրված: Պատահական չէ, որ ինչպես դպրոցում էր արժանանում պատվոգրերի, գովասանագրերի, շնորհակալագրերի, այնպես էլ՝ ծառայության ընթացքում: Մի անգամ երջանկահիշատակ, Արցախյան վերջին պատերազմում նահատակված երգիչ Գեւորգ Հաջյանի հետ եղանք Մոնթեենց տանը: Գեւորգը 1 շաբաթ մնաց Կովսականում եւ տարածքի երեխաների համար Կոմիտասին նվիրված դասընթացներ էր կազմակերպում: Մոնթեի հայրը՝ Ավետիքը, եղբայրը՝ Ահարոնը (Կովսականի քաղաքապետարանի ակումբավար) հպարտորեն էին խոսում Մոնթեի մասին, երբ ծառայում էր բանակում: Բանակից վերադառնալուց հետո զբաղված էր ընտանիքին օգնելով, իրենց տնտեսությունը զարգացնելով: Սակայն 2020 թ. սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմն առաջնագիծ տարավ նաեւ հազարից ավելի քաշաթաղցիների՝ զորակոչով ու կամավոր, աշխարհազորով, չհաշված՝ 200-ից ավելի ժամկետային զինծառայողները: Մոնթեն էլ հենց առաջին օրը զորահավաքով, որպես պահեստազորային, հասավ առաջնագիծ՝ Ջրական: Այդ օրերին ամենաթեժ մարտերն էին մղվում այս ուղղությամբ: Առաջին, երկրորդ, երրորդ օրերին արդեն լսում էինք նաեւ քաշաթաղցի նահատակների ու վիրավորների մասին: Ջրականի 21-րդ մարտական հենակետում էր հայրենի սահմանը պահում Մոնթեն: «Նարինջ 1»-ը տարածքի կարեւոր դիրքերից էր, որն էլ մարտական ջոկատի կազմում պաշտպանում էր Մոնթեն: Չի ենթարկվել «Նահա՛նջ» հրամանին. Կովսականը շատ հեռու չէր այստեղից: Ասում են՝ մինչեւ վերջին շունչը կռվում էր մարտադաշտում, դիմադրում իրենցից բազում անգամ ավելի թշնամուն եւ… 2020 թ. հոկտեմբերի 2-ից քաջորդին համարվում էր անհետ կորած: Լուրեր էին պտտվում, որ վիրավոր է եղել: Կար հույս՝ ողջ է, մի օր տուն կգա: Հարազատներն ու մտերիմները, ողջ Կովսականը հույսով սպասում էին: Սակայն… Օգոստոսին գտնվեց հերոսի աճյունը, որը, ըստ հարազատների, փետրվարին էր թշնամու կողմից հանձնվել հայկական կողմին:

Ջոհրաբ ԸՌՔՈՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՉՊԱՐՏԱՆԱԼՈՒ ԵՎՍ ՄԵԿ ԱՌԻԹ

Հոկտեմբերի 23-25-ը Հայաստանի Կիոկուշին կարատեի ազգային ֆեդերացիայի կողմից անցկացվեց միջազգային սեմինար KWF վարկածով՝ կիոկուշին կարատեի միջազգային ֆեդերացիայի նախագահ Անտոնիո Պիներոյի կողմից: Սեմինարին մասնակցել է շուրջ 350 մարզիկ, որոնց մեջ սեւ գոտու 55 թեկնածու կար, այդ թվում՝ մարզիկներ Արցախից:



Արմեն Պետրոսյան եւ Սպարտակ Գասպարյան

«Վերադարձ» կիոկուշին կարատեի ակումբի հիմնադիր եւ մարզիչ Արմեն Պետրոսյանը պատմեց, թե ինչպես են մարզիկները դրսեւորել իրենց այդ բարդ ու պատասխանատու փորձության ժամանակ: «5 հոգի իրենց առաջին դանի թեկնածուներն էին, նրանք Արցախի հինգ մարզիկներն են, որոնք հիմա մարզվում են թե՛ ինձ մոտ եւ թե՛ Հայաստանի ֆեդերացիայի տարբեր մարզիչների մոտ: Նշեմ, որ մենք վերջին անգամ սեւ գոտու համար քննություն ենք հանձնել 2011 թվականին եւ 15 տարի հետո նորից մեզ հնարավորություն տրվեց: Ուրախալի է այն հանգամանքը, որ արցախցի բոլոր մարզիկները հաջողությամբ հանձնեցին քննությունը: Շուրջ 9 ժամ հաղթահարելով քննության բոլոր դժվարությունները՝ արցախցի մարզիկներին հաջողվել է ստանալ իրենց առաջին վարպետական սեւ գոտիները: Սեւ գոտի առաջին դան են ստացել «Վերադարձ» կիոկուշին կարատեի ակումբի եւ «Lion heart » մարտարվեստների ակադեմիայում մարզվող իմ սաներ Աշոտ Ավագիմյանն ու Լեւոն Բարսեղյանը, ինչպես նաեւ Հրաչիկ Գրիգորյանի գլխավորությամբ մարտարվեստների ակադեմիայում մարզվող Մարինա Ներսիսյանը եւ Հրաչիկ Հայրապետյանը, եւ «ՋիՋի» ակումբում մարզիչ Էմիլ Ղազարյանի մոտ մարզվող Վլադիմիր Թառանյանը: Ես՝ Արմեն Պետրոսյանս, նույնպես արժանացել եմ սեւ գոտու երկրորդ դանի, որի համար քննություն էի հանձնել անցած տարվա օգոստոսին: Որպես արցախյան կազմակերպության պատասխանատու՝ շնորհակալություն եմ հայտնում Հայաստանի կիոկուշին կարատեի ֆեդերացիայի նախագահ Սպարտակ Գասպարյանին՝ կազմակերպչական աշխատանքի համար, ինչպես նաեւ մեր մարզիկների նախկին ու ներկա մարզիչներին՝ իրենց աշխատանքի համար, որոնց շնորհիվ է նաեւ, որ մենք կարողացանք ունենալ 5 սեւ գոտի»,-ասում է Արմեն Պետրոսյանը:







Աշոտ Ավագիմյան եւ Անտոնիո Պիներո

Շնորհավորում ենք կարատեիստներին՝ գնահատելով նրանց քրտնաջան աշխատանքը, կարգապահությունն ու նվիրումը մարտարվեստին:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՍ՝ ՍՈՎՈՐԻ՛Ր

«Մարզչական կուլտուրա» հասկացությունը դեռեւս գիտական տերմին չի համարվում: Այն բավարար կերպով հետազոտված ու նկարագրված չէ հատուկ գրականության մեջ: Հնարավոր է՝ այդ պատճառով է, որ տարբեր դպրոցների ու կոլեկտիվների մարզիչների հարցումը ցույց է տալիս, որ մարզչական կուլտուրայի մասին պատկերացումները տարբեր են:



Արամ Գեւորգյան, կարատե

Որոշ մարզիչներ խորապես հավատում են, որ եթե նրանք մարզիկներին սովորեցնեն քաղաքավարություն, լավ վարվելաձեւի կանոններ, նրանց միջից հանեն իրար մականուններ տալու սովորությունը, սերմանեն նրանց մեջ գեղեցիկը ընկալելու հետաքրքրությունը, ապա կարելի է համարել, որ գործն արված է՝ մշակութային ծրագիրը կատարված է: Փորձառու մարզիչներն այլ հայացք ունեն հարցին: Նրանք գտնում են, որ իրենց պարտականությունների մեջ են մտնում ոչ միայն մարզիկների ֆիզիկական հատկությունների զարգացումը եւ իրենց սպորտաձեւի տեխնիկայի ու մարտավարության ուսուցումը, այլ նաեւ պատանիներին ու դեռահասներին օգնելը, որ նրանք գտնեն օրինակելի կերպար իրենց համար, ինչպես նաեւ՝ սպորտում բարձր իդեալների հասնելու ցանկության սերմանումը, որի մեջ է մշակույթի նախահիմքը:



Արմեն Պետրոսյան, կարատե

Իսկ ի՞նչ է կուլտուրան, կուլտուրական մարդը, մարզչական կուլտուրան:

Կուլտուրական մարդը, դասական կարծիքով, նա չէ, ով շատ է կարդացել դասական ստեղծագործություններ, շատ է լսել դասական երաժշտություն եւ այլն, այլ նա է, ով հարստացել է այդ ամենով, ում համար բացվել է անցյալ դարերի մտքի խորությունը, ուրիշների հոգեւոր կյանքը, ով շատ բան է հասկացել, հետեւաբար դարձել է համբերատար ուրիշների հանդեպ, սկսել է հասկանալ ուրիշը:



Իվան Ազիզբեկյան, ձյուդո

Մարզչական կուլտուրայից խոսելիս պետք է հաշվի առնել նաեւ այն, ինչը մտել է դրա մեջ համամարդկային մշակույթից եւ այն, ինչը վերածնվում է անմիջապես մարզչական աշխատանքով: Ոմանք այդ հասկացության տակ ընկալում են մարզչական կրթության բարձր մակարդակ, ոմանք՝ մարզչի անձնային այլ հատկություններ՝ առանձնանշելով մանկավարժական տակտն ու մարզիկի անձի հանդեպ հարգանքը, մյուսները՝ մարզչական վարպետությունը եւ այլն: Ավելի փորձառու մարզիչները գտնում են, որ մարզչական կուլտուրան ընդգրկում է մարզչի անձնային բոլոր ոլորտները, նրա կյանքի փորձը:

Մարզչի անձնային բարդ հատկությունները, որոնք կազմում են մարզչական կուլտուրայի էական հիմքը, հետեւյալն են.



Էռնեստ Միրզոյան, սամբո

հետաքրքրությունների եւ պահանջմունքների հստակ արտահայտված, կայուն ուղղվածություն,

մտավոր, բարոյական եւ գեղագիտական զարգացում,

մարզչական վարպետություն,

բարյացակամ բնավորություն, շփվողականություն, աշխատանքով տարվածություն,

անդադար ինքնակատարելագործում,

գիտական եւ գեղարվեստա-գեղագիտական լայն աշխարհայացք,

ստեղծագործական վիճակ հեշտ եւ բնական մտնելու կարողություն, հուզական վիճակի, բանական եւ կամային գործընթացների մեջ վարպետորեն մտնելու հատկություն:

☞8

ՄՇԱԿՈՒՅԹ

ԱՐՑԱԽԻ ԲԱԼԻԿՆԵՐԸ ԿՐԿԻՆ ՓԱՅԼԵՑԻՆ

Երևանի Հովի. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնի բեմում հոկտեմբերի 19-ին հնչեցին Առնո Բաբաջանյանի երգերը: Նվիրված մեծ երգահանի 105-ամյա տարեդարձին՝ «Ջոն Հայաստանին» խորագիրը կրող համերգով հանդես եկավ «Արցախի բալիկներ» մանկապատանեկան համույթը՝ Գայանե Հարությունյանի ղեկավարությամբ: Արցախցի տաղանդավոր երեխաներից, պատանիներից ու երիտասարդներից կազմված համույթն այս տարի արդեն մի քանի անգամ հանդես է եկել երևանյան բեմերում և մշտապես գերել հանդիսատեսին, ոգևորել, ստիպել ոտքի վրա ծափողջույններ պարգևել իրենց: Արցախցիներին՝ նաև տունդարձի հույս հաղորդել:

1990-ականներին Արցախում կազմավորված «Արցախի բալիկներ» մանկապատանեկան համույթը հարուստ պատմություն ունի: Սակայն եղավ Արցախի բռնի հայաթափումը, ու մեր հայրենի երկրամասում հայտնի մշակութային կառույցները կարծես այլևս չէին գործի: Բայց եղան անհատներ, հասարակական կազմակերպություններ, որոնք աջակցության ձեռք մեկնեցին արցախցի մշակութային գործիչներին: Արդեն տեղեկացրել ենք՝ Մոսկվայում գործող «Դիալոգ» հասարակական կազմակերպությունը՝ հիմնադիր նախագահ Յուրի Նավոյանի նախաձեռնությամբ, հովանավորեց մի քանի մշակութային խմբերի վերակազմավորումն ու հանդես գալը Երևանում, այլ վայրերում: Այդ խմբերի կազմում է նաև «Արցախի բալիկներ»-ը: «Դիալոգ»-ի հովանավորությամբ Մոսկվայում հրատարակվող գրքերի ցանկում հատուկ տեղ ունի Առնո Բաբաջանյանի երկերի լիակատար ժողովածուն: Նախատեսած է հրատարակել 25 հատոր, որից 3-ն արդեն պատրաստ են: Եվ կայացած համերգն էլ



այս շրջանակում էր: Մանուկ ու պատանի, երիտասարդ երաժիշտներն իրենց ղեկավարի գլխավորությամբ այս անգամ հանդես եկան հատուկ՝ հոբելյանական ծրագրով՝ կատարելով Ա. Բաբաջանյանի՝ ժողովրդի կողմից սիրված երգերը՝ հայերեն և ռուսերեն՝ որոշները համեմելով գեղեցիկ պարային կատարումներով: Հանդիսատեսի կողմից մեծ ոգևորությամբ ընդունվեց նաև երիտասարդական եռյակի ելույթները: Համերգն սկսվեց Աշոտ Գրաշու խոսքերով, Առնո Բաբաջանյան երաժշտությամբ ստեղծված «Ազգ իմ, փառապանծ» երգով՝ ամբողջ համույթի կատարմամբ:

Հայաստան աշխարհ դու մեր կարոտն ես, նոր կյանքով անմար,

Քո ճամփան հնում արնոտ ու քարոտ էր, դու ծաղկիր հիմա:

Ուր լինենք, հավետ մեր լույս փարոսը տունն է հայրենի:

Մաշտոցի հզոր լեզուն վառ հույսն է ամեն մի հայի:

Այնուհետև հնչեցին Բաբաջանյանի հանրահայտ երգերը, որոնք արդեն տասնյակ տարիներ մեր ազգային մշակույթի գանձերն են՝ սիրված նաև այլ ժողովուրդների կողմից: Իհարկե, մեր փոքրիկները նաև նորովի ներկայացրին սիրված երգերը, ու հանդիսատեսը գոհ էր: Որոշ երգեր հնչում էին նաև բեմականացված, ու փայլում էին փոքրիկները, ներկայանում անկաշկանդ:

Դահլիճում ներկա էին Հայաստանի թատերական գործիչների միության նախագահ Հակոբ Ղազանչյանը, «Դիալոգ»-ի նախագահ Յու. Նավոյանը, որոնց համագործակցությամբ ու աջակցությամբ վերակազմավորվել ու գործում է Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնը՝ Ռուզան Խաչատրյանի ղեկավարությամբ: Ներկա էին նաև արցախյան մշակութային կառույցների ղեկավարներ, հյուրեր արտերկրից, արցախցիներ, որոնց համար նման համերգները նաև համախմբվելու, միմյանց հանդիպելու, որոշ չափով կարոտ առնելու առիթներ են:

Համերգից հետո զրուցեցի լոնդոնաբնակ մեր հայրենակից, «Թեքեյան» մշակութային հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ Բագրատ Նազարյանի հետ, որը ներկա էր իմ հրավերով: Ոգևորված էր, ուրախ, որ արցախյան մշակութային խմբերը գործում են Երևանում: «Համերգի ողջ ընթացքում «Հարսնացուն հյուսիսից» ֆիլմն էի հիշում,- ասաց Բ. Նազարյանը,- նաև գնումներ կատարեցի իմ թոռների համար արցախցիների ձեռագործ նվերներից»: Յու. Նավոյանի նախաձեռնությամբ ձևավորվել է ավանդույթ, որ արցախյան մշակութային խմբերի ելույթներին զուգահեռ դահլիճների նախասրահներում կազմակերպվում է արցախցիների ձեռքի աշխատանքների ցուցահանդես-վաճառք:

Հանդիսատեսի ոգևորությունը մեծ էր, ու չդադարող ծափողջույնների ուղեկցությամբ համույթի կողմից կրկին հնչեց Արամայիս Սահակյանի խոսքերով գրված «Մեր սիրելի Երևան» երգը.

Դու մեզ համար նորաշունչ Անի ու Վան,

Հույս եւ հավատ հայության

Քո սրբությամբ դու ամեն հայի մեջ կաս,

Մեր սիրելի Երևան:

Ջոհրաբ ԲՈՔՈՅԱՆ

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՍ՝ ՍՈՎՈՐԻ՛Ր

7

Իհարկե, մարզչական կուլտուրան չի ներառում մարդկային կուլտուրայից առանձին արտահայտված հատկություններ, ոչ էլ դրանց գումարը: Հիմքում ընդհանուր մարդկային կուլտուրայի տարրերն են՝ աշխարհայացք, բարոյական, գեղագիտական, ինտելեկտուալ հատկությունները:

Մարզչական մշակութային ծրագիրը առաջին հերթին պետք է ուղղված լինի սաներին սովորեցնելու զգալ ուրիշի ցավը, ինչպես իրենը, հարգել մարդկային անձը, ատել եսասիրությունը, սուտն ու կեղծիքը:

Մարզչի կուլտուրան անձնականը հանուն սաների ու մարզիկների զոհաբերելու կարողությունն է, անկեղծ, ոչ թե ցուցադրաբար, հարգանքը մարզիկի նկատմամբ, թեկուզ եթե մարզիկը 5 կամ 7 տարեկան է: Մարզչական կուլտուրան բարձր համբերատարության, զգայունության եւ ապրումակցելու ընդունակության մեջ է: Մարզիչը չպետք է մոռանա պարզ իրականությունը, այն է՝ մարզիկը մեծանալու հատկություն ունի, կարող է գալ ուրիշ կոլեկտիվից՝ իր գաղափարներով ու սովորություններով, եւ մարզիչը ստիպված է երբեմն իր սաների հետ միասին հարմարվել նոր պայմաններին: Պատկերացրեք, թե որքան ջանք պետք է գործադրվի մարզչի կողմից նոր կոլեկտիվում իր տեսակետը պահպանելու համար: Եթե կարողացավ, ուրեմն նրա մարզչական կուլտուրայի աստիճանը բարձր է:

Կուլտուրական լինել՝ չի նշանակում կուտակել թվերի, անունների, ամսաթվերի, մի խոսքով՝ տարաբնույթ եւ անհրաժեշտ ինֆորմացիայի պաշար, որը տալիս է կրթությունը: Դա բավարար չէ: Կուլտուրական լինել նշանակում է անդադար կատարելագործվել, դառնալ ավելի լավը: Դաստիարակված լինելու դերը թերեւս քիչ չէ, քան կրթված լինելուը:

Եվ այսպես, ի՞նչ է իրենից ներկայացնում կուլտուրական մարզիչը:

Առաջին հերթին նա իրական ինտելիգենտ է, որը կրում է մարդկային կուլտուրայի բոլոր արժեքները: Երկրորդ հերթին նա անխախտորեն հետեւում է բարոյական օրենքներին առօրյա կյանքում: Երրորդ՝ նա իմանում ու հասկանում է կյանքն իր բոլոր օրենքներով: Չորրորդ՝ նա միշտ հետաքրքրասեր է: Հինգերորդ՝ նա տարբերություն չի դնում իր եւ սաների միջեւ: Վեցերորդ՝ նա անկասկածորեն հավատում է ճշմարտությանը եւ բարությանը: Յոթերորդ՝ նա անդադար բարձրացնում է իր մասնագիտական վարպետությունը: Ութերորդ՝ նա ձգտում է լինել իր պետության ակտիվ շինարարը: Իններորդ՝ անդադար աշխատում է իր անձի զարգացման վրա: Տասներորդ՝ իր սաներին կուլտուրա սովորեցնելով՝ նա էլ է միաժամանակ սովորում: Դա է կյանքի հրամայականը. սովորեցնում ես՝ սովորի՛ր:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» կրթամշակութային ՀԿ

✉ ք.Երևան,
Անտառային փ. 188/16 ☎ 097-22-38-27
E-mail: gorctert@mail.ru: *www.lusarar.info*

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները:
Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:
Թերթը վաճառքի ենթակա չէ:

Տպագրվում է «Լիմուշ» ՍՊԸ տպարանում:
Ծավալը՝ տպագրական 2 մամուլ:
Տպաքանակ՝ 500
Ստորագրված է տպագրության՝ 02.11. 2026թ.: